Նախագիծ
Երկրորդ ընթերցում

Կ-966[3]-25.11.2024,15.01.2025-ԳԿ-011/1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ
ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. 1985 թվականի դեկտեմբերի 6-ի Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 14-րդ գլուխը լրացնել հետեւյալ բովանդակությամբ 189.29-րդ հոդվածով.

«Հոդված 189.29. Բարձրագույն կրթության բնագավառում օրենսդրության պահանջները խախտելը

1. Բարձրագույն կրթության համապատասխան մակարդակներում կրթական ծրագրի իրականացման իրավունքի տրամադրման օրենսդրությամբ սահմանված պայմանները խախտելը, ինչպես նաև բարձրագույն կրթության համապատասխան մակարդակի յուրաքանչյուր աստիճանի ու որակավորման համար լիցենզիայի տրման պայմանները խախտելը՝

առաջացնում է նախազգուշացում:

2. Բարձրագույն կրթության համապատասխան մակարդակներում կրթական ծրագրի իրականացման իրավունքից և յուրաքանչյուր աստիճանի ու որակավորման համար լիցենզիայի պայմաններից բխող՝ օրենքով նախատեսված հաշվետվությունների ներկայացման ժամկետը 10 օրվանից ավելի ժամկետով խախտելը՝

առաջացնում է տուգանք՝ իրավաբանական անձի նկատմամբ նվազագույն աշխատավարձի հազարապատիկի չափով:

3. Բարձրագույն կրթության համապատասխան մակարդակի յուրաքանչյուր աստիճանի ու որակավորման համար տրված լիցենզիայով սահմանված սովորողների սահմանային թիվը գերազանցելը՝

առաջացնում է տուգանք՝ նվազագույն աշխատավարձի հազարապատիկի չափով չափով:

4. Մեկ ուսումնական տարվա ընթացքում կրթության պետական կառավարման լիազոր մարմնի կողմից օրենքով նախատեսված հիմքերով երկրորդ անգամ նախազգուշացվելը՝

առաջացնում է տուգանք՝ նվազագույն աշխատավարձի հազարհինգհարյուրապատիկ չափով:

5. Օրենքով նախատեսված խախտման համար կրթության պետական կառավարման լիազոր մարմնի կիրառած նախազգուշացմամբ սահմանված ժամկետներում այդ խախտումը չվերացնելը՝

առաջացնում է տուգանք՝ նվազագույն աշխատավարձի հազարապատիկի չափով:

6. Սույն հոդվածի 1-ին մասով սահմանված արարքներից որեւէ մեկը՝ վարչական տույժ նշանակելու մասին որոշման անբողոքարկելի դառնալուց հետո՝ մեկ տարվա ընթացքում կրկին կատարելը՝

առաջացնում է տուգանք՝ նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկի չափով:

7. Սույն հոդվածի 2-5-րդ մասերով սահմանված արարքներից որեւէ մեկը՝ վարչական տույժ նշանակելու մասին որոշման անբողոքարկելի դառնալուց հետո՝ մեկ տարվա ընթացքում կրկին կատարելը՝

առաջացնում է տուգանք՝ սույն հոդվածով սահմանված տուգանքի չափերի կրկնապատիկի չափով:

Հոդված 2. Հոդված 189.30. Ուսումնական հաստատությունների և կազմակերպությունների կողմից հաշվետվությունները չներկայացնելը

1. Ուսումնական հաստատությունների և կազմակերպությունների կողմից հաշվետվությունները օրենսդրությամբ սահմանված ժամկետում կրթության բնագավառի վերահսկողություն իրականացնող տեսչական մարմին չներկայացնելը՝

առաջացնում է նախազգուշացում:

2. Սույն հոդվածի 1-ին մասով սահմանված արարքը՝ վարչական տույժ նշանակելու մասին որոշման անբողոքարկելի դառնալուց հետո՝ մեկ տարվա ընթացքում կրկին կատարելը՝

առաջացնում է տուգանք նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկի չափով:»:

Հոդված 3. Օրենսգիրքը լրացնել հետեւյալ բովանդակությամբ 244.24-րդ հոդվածով.

«Հոդված 244.24. Կրթության բնագավառի նկատմամբ վերահսկողություն իրականացնող տեսաչական մարմինը

1.Կրթության բնագավառի նկատմամբ վերահսկողութթություն իրականացնող տեսչական մարմինը քննում է սույն օրենսգրքի 189.29-րդ և 189.30-րդ հոդվածներով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը:

2. Սույն հոդվածի 1-ին մասում նշված հոդվածներով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործեր քննելու եւ վարչական տույժեր նշանակելու իրավունք ունի տեսչական մարմնի ղեկավարը:

Հոդված 4. Եզրափակից և անցումային դրույթներ

1. Սույն օրենքն ուժի մեջ է 2026 թվականի հունվարի 1-ից:

ՏԵՂԵԿԱՆՔ

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի փոփոխվող և լրացվող հոդվածների վերաբերյալ

Առաջին-Երկրորդ ընթերցում

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. 1985 թվականի դեկտեմբերի 6-ի Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 14-րդ գլուխը լրացնել հետեւյալ բովանդակությամբ 189.29-րդ հոդվածով.

«Հոդված 189.29. Բարձրագույն կրթության բնագավառում օրենսդրության պահանջները խախտելը

~~1. Օրենսդրությամբ սահմանված հիմնական պրոֆեսորադասախոսական կազմին կամ մանկավարժներին կամ ուսումնական տարածքին կամ լաբորատոր կամ ուսումնամեթոդական ապահովվածության կամ գրադարանային-տեղեկատվական համակարգին կամ ուսումնաարտադրական պրակտիկայի բազային ներկայացվող պահանջները կամ լիցենզավորման կարգով նախատեսված այլ պահանջները խախտելը՝~~

1. Բարձրագույն կրթության համապատասխան մակարդակներում կրթական ծրագրի իրականացման իրավունքի տրամադրման օրենսդրությամբ սահմանված պայմանները խախտելը, ինչպես նաև բարձրագույն կրթության համապատասխան մակարդակի յուրաքանչյուր աստիճանի ու որակավորման համար լիցենզիայի տրման պայմանները խախտելը՝

առաջացնում է նախազգուշացում:

2. Բարձրագույն կրթության համապատասխան մակարդակներում կրթական ծրագրի իրականացման իրավունքից և յուրաքանչյուր աստիճանի ու որակավորման համար լիցենզիայի պայմաններից բխող՝~~ուսումնական հաստատության կողմից լիցենզավորման ենթակա գործունեությունից բխող՝~~ օրենքով նախատեսված հաշվետվությունների ներկայացման ժամկետը 10 օրվանից ավելի ժամկետով խախտելը՝

առաջացնում է տուգանք՝ իրավաբանական անձի նկատմամբ նվազագույն աշխատավարձի հազարապատիկի չափով:

3. ~~Բարձրագույն ուսումնական հաստատության ներկայացրած հայտի հիմքով իրեն հատկացված սովորողների (ըստ կուրսերի) նախատեսվող սահմանային թիվը խախտելը՝~~

Բարձրագույն կրթության համապատասխան մակարդակի յուրաքանչյուր աստիճանի ու որակավորման համար տրված լիցենզիայով սահմանված սովորողների սահմանային թիվը գերազանցելը՝

առաջացնում է տուգանք՝ նվազագույն աշխատավարձի հազարապատիկի չափով չափով:

4. Մեկ ուսումնական տարվա ընթացքում կրթության պետական կառավարման լիազոր մարմնի կողմից օրենքով նախատեսված հիմքերով երկրորդ անգամ նախազգուշացվելը՝

առաջացնում է տուգանք՝ նվազագույն աշխատավարձի հազարհինգհարյուրապատիկ չափով:

5. Օրենքով նախատեսված խախտման համար կրթության պետական կառավարման լիազոր մարմնի կիրառած նախազգուշացմամբ սահմանված ժամկետներում այդ խախտումը չվերացնելը՝

առաջացնում է տուգանք՝ նվազագույն աշխատավարձի հազարապատիկի չափով:

6. Սույն հոդվածի 1-ին մասով սահմանված արարքներից որեւէ մեկը՝ վարչական տույժ նշանակելու մասին որոշման անբողոքարկելի դառնալուց հետո՝ մեկ տարվա ընթացքում կրկին կատարելը՝

առաջացնում է տուգանք՝ նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկի չափով:

7. Սույն հոդվածի 2-5-րդ մասերով սահմանված արարքներից որեւէ մեկը՝ վարչական տույժ նշանակելու մասին որոշման անբողոքարկելի դառնալուց հետո՝ մեկ տարվա ընթացքում կրկին կատարելը՝

առաջացնում է տուգանք՝ սույն հոդվածով սահմանված տուգանքի չափերի կրկնապատիկի չափով:

Հոդված 2. Հոդված 189.30. Ուսումնական հաստատությունների և կազմակերպությունների կողմից հաշվետվությունները չներկայացնելը

1. Ուսումնական հաստատությունների և կազմակերպությունների կողմից հաշվետվությունները օրենսդրությամբ սահմանված ժամկետում կրթության բնագավառի վերահսկողություն իրականացնող տեսչական մարմին չներկայացնելը՝

առաջացնում է նախազգուշացում:

2. Սույն հոդվածի 1-ին մասով սահմանված արարքը՝ վարչական տույժ նշանակելու մասին որոշման անբողոքարկելի դառնալուց հետո՝ մեկ տարվա ընթացքում կրկին կատարելը՝

առաջացնում է տուգանք նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկի չափով:»:

Հոդված ~~2~~3. Օրենսգիրքը լրացնել հետեւյալ բովանդակությամբ 244.24-րդ հոդվածով.

«Հոդված 244.24. Կրթության բնագավառի նկատմամբ վերահսկողություն իրականացնող տեսաչական մարմինը

1.Կրթության բնագավառի նկատմամբ վերահսկողութթություն իրականացնող տեսչական մարմինը քննում է սույն օրենսգրքի 189.29-րդ և 189.30-րդ հոդվածներով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը:

2. Սույն հոդվածի 1-ին մասում նշված հոդվածներով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործեր քննելու եւ վարչական տույժեր նշանակելու իրավունք ունի տեսչական մարմնի ղեկավարը:

Հոդված ~~3~~4. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում ~~պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:~~2026 թվականի հունվարի 1-ից

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ **«ԿՐԹՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌԻ ՏԵՍՉԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (ՓԱՍՏԱԹՂԹԱՅԻՆ ԿՈԴ՝ Կ-966-25.11.2024-ԳԿ-011/1), «ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (ՓԱՍՏԱԹՂԹԱՅԻՆ ԿՈԴ՝ Կ-966[1] -25.11.2024-ԳԿ-011/1), «ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԵՎ ՀԵՏԲՈՒՀԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (ՓԱՍՏԱԹՂԹԱՅԻՆ ԿՈԴ՝ Կ-966[2] -25.11.2024-ԳԿ-011/1) ԵՒ «ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (ՓԱՍՏԱԹՂԹԱՅԻՆ ԿՈԴ՝ Կ-9663 -25.11.2024-ԳԿ-011/1) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ**

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություններն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1.	ՀՀ ԱԺ պատգամավոր Սիսակ Գաբրիելյան ՀՀ կառավարություն,	**«Կրթության բնագավառի տեսչական վերահսկողության մասին» (այսուհետև՝ ԿԲՏՎ) օրենքի նախագծի հոդված 1, մաս 1**	Շարադրել հետևյալ խմբագրությամբ. «1. Սույն օրենքը կարգավորում է Հայաստանի Հանրապետության հանրակրթության (նախադպրոցական, տարրական, հիմնական եւ միջնակարգ կրթության), արտադպրոցական, մասնագիտական կրթության (այսուհետև՝ կրթության բնագավառ) եւ բարձրագույն կրթության ոլորտներում սույն օրենքով սահմանված հարաբերությունների և գործընթացների իրականացման, ինչպես նաև տվյալ ոլորտները կարգավորող օրենսդրությամբ սահմանված պահանջների համապատասխանության նկատմամբ տեսչական վերահսկողություն կազմակերպելու եւ իրականացնելու հետ կապված այլ իրավահարաբերությունները:»	Առաջարկն ընդունվել է Հիմնավորում. հստակեցվել է կրթության բնագավառի ոլորտների շրջանակը և ընդհանրական կրթության օրենսդրության նկատմամբ վերահսկողությունը կոնկրետացվել է սույն օրենքով սահմանված ուղղություններով տեսչական վերահսկողություն իրականացնելու վրա	Ընդունվել է
2.	ՀՀ ԱԺ	**ԿԲՏՎ**	«Իրականացման» բառից հետո ավելացնել	Ընդունվել է	Ընդունվել է

	պատգամավոր Լիլիթ Գալստյան	**օրենքի նախագծի հոդված 1, մաս 1**	«իրավական» բառը:	մասնակի, հոդվածը ամբողջությամբ խմբագրվել է	
3.	ՀՀ ԱԺ պատգամավոր Սիսակ Գաբրիելյան ՀՀ կառավարություն	**ԿԲՏՎ) օրենքի նախագծի հոդված 2, մաս 1**	Լրացնել «կրթության ոլորտը կարգավորող» և «նորմատի իրավական» բառերը	Ընդունվել է	Ընդունվել է
4.	ՀՀ ԱԺ պատգամավոր Սիսակ Գաբրիելյան ՀՀ կառավարություն	**ԿԲՏՎ) օրենքի նախագծի հոդված 3, մաս 1**	Շարադրել հետևյալ խմբագրումները. 1) հանել 1-ին կետը 2) 2-րդ կետը համարել 1-ին և «կրթության տեչական մարմին» բառերը փոխարինել «պետական մարմին» բառերով, 3) 3-րդ կետը համարել 2-րդ և «Կառավարության» բառը փոխարինե «պետական» բառով. 4) 4-րդ կետը համարել 3-րդ և շարադրել հետևյալ խմբագրությամբ. «3) կրթության բնագավառի տեսչական վերահսկողություն՝ կրթության բնագավառի օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ, սույն օրենքով սահմանված նպատակների և խնդիրների իրականացման, կրթության իրավունքի իրացումն ապահովելու նպատակով իրականացվող գործընթաց.» 5) 5-րդ կետը համարել 4-րդ և շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «4) տեսչավորում՝ հանրակրթական, այդ թվում՝ նախադպրոցական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում անցկացվող համալիր գործառույթ, որն ուղղված է կրթության բնագավառում պետական քաղաքականության ապահովմանը, կրթության որակի գնահատմանը կամ կրթության կազմակերպման առկա խնդիրների բացահայտմանը, խորհրդատվության տրամադրմանը. 6) 7-րդ կետը համարել 6-րդ և շարադրել հետևյալ կերպ. «վերահսկվող սուբյեկտ՝ սույն օրենքով սահմանված	Ընդունվել է	Ընդունվել է

			կրթության բնագավառի ուսումնական հաստատություն կամ այդ բնագավառում կրթական ծրագրեր իրականացնող կազմակերպություն, սույն օրենքով սահմանված դեպքերում նաև՝ բարձրագույն ուսումնական հաստատություն:»		
5.	ՀՀ ԱԺ պատգամավոր Լիլիթ Գալստյան	**ԿԲՏՎ օրենքի նախագծի հոդված 3, մաս 1**	«Դիտարկում՝ սույն օրենքով սահմանված կարգով կոնկրետ գործողությունների շրջանակը, որը իրավասու մարմինը լիազորված է կատարել դիտարկում իրականացնելու ընթացքում. . .»: Սահմանել դիտարկման կարգի չափանիշներ, մեթոդաբանություն, կամ՝ լիազորող նորմեր:	Չի ընդունվել, Դիտարկման հիմնարարար պայմանները սահմանված են 9-րդ հուդվածում, իսկ մեթոդաբանությունը կարգավորվում է ստուգաթերթերով	Ընդունվել է
6.	ՀՀ ԱԺ պատգամավոր Սիսակ Գաբրիելյան ՀՀ կառավարություն	**ԿԲՏՎ) օրենքի նախագծի հոդված 4, մաս 1, 2**	Շարադրել հետևյալ խմբագրությամբ. 1. Կրթության բնագավառի տեսչական վերահսկողության նպատակներն են՝ 1) Հայաստանի Հանրապետությունում կրթության որակի բարձրացմանն աջակցումը. 2) կրթության բնագավառի քաղաքականության սկզբունքների առավելագույն իրացման ապահովումը. 3) կրթության բնագավառում նորմատիվ իրավական ակտերի պահանջների կատարմանն աջակցումը. 4) կրթության բնագավառը կարգավորող օրենսդրությամբ սահմանված գործընթացների անհամապատասխանությունների և խախտումների կանխարգելմանը, խնդիրների բացահայտմանը, կարգավորումների բարելավմանն աջակցումը. 5) սովորողների կրթության իրավունքի, կրթության և վերջարդյունքների հասանելիության հավասար հնարավորությունների ապահովումը: 2. Կրթության բնագավառի տեսչական վերահսկողության խնդիրներն են՝ 1) կրթության բնագավառը կարգավորող օրենսդրության պահանջների կատարմանն ուղղված կանխարգելիչ	Ընդունվել է Հիմնավորում Ձևակերպումները համապատասխանեցվել է միջազգային կարգավորումներին՝ համապատասխանեցվելով այն երկրների մոդելին, որոնց դեպքում հավատամրագրման և տեսչական վերահսկողության համակարգերը առանձնացված են:	Ընդունվել է

			գործառույթների իրականացումը. 2) կրթության բնագավառի շահառուների կրթական իրավունքների պաշտպանությանը միտված կանխարգելիչ գործառույթների իրականացումը. 3) հանրակրթական, այդ թվում՝ նախադպրոցական ծրագրերի իրացման գործընթացների և սովորողների կողմից այդ ծրագրերի յուրացման հնարավորությունների ապահովմանն աջակցումը. 4) ձեռք բերված տվյալների վերլուծությունը և նպատակային կառավարումը, 5) կրթական գործընթացների և ծառայությունների արդյունավետության գնահատման ու հետադարձ կապի ապահովումը: 6) կրթության բնագավառում ռիսկերի գնահատումը եւ կառավարումը:		
7.	ՀՀ ԱԺ պատգամավոր Լիլիթ Գալստյան	**ԿԲՏՎ) օրենքի նախագծի հոդված 4,**	Հստակեցնել, թե կրթության բնագավառի ինչ սկզբունքների մասին է խոսքը 1) կետում՝ ուր իբրև նպատակ նշվում է «կրթության բնագավառի սկզբունքների առավելագույն իրացման ապահովումը» 2-րդ բաժնի 3) և 4) կետերում նշված «կրթական ծառայությունների արդյունավետության, ռիսկերի գնահատման և կառավարման» ի՞նչ կարգերի մասին է խոսքը. սահմանված չեն լիազորող նորմեր:	Ընդունվել է մասնակի, Հոդվածը խմբագրվել է	Ընդունվել է
8.	ՀՀ ԱԺ պատգամավոր Սիսակ Գաբրիելյան ՀՀ կառավարություն	**ԿԲՏՎ) օրենքի նախագծի հոդված 5,**	1. Տեսչական մարմինն իր նպատակների եւ խնդիրների իրականացման համար Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված կարգով իրականացնում է վերահսկողություն՝ 1) կրթության բնագավառում և բարձրագույն կրթության ոլորտում՝ կրթական ծրագրի համապատասխան մակարդակի իրականացման իրավունքի և յուրաքանչյուր որակավորման կամ կրթական ծրագրի աստիճանի լիցենզիայի համար սահմանված պայմանների պահպանման, ինչպես նաև ուսումնական հաստատությունների (բացառությամբ՝ արտադպրոցական կրթության)՝	Ընդունվել է. Հիմնավորում. Վերահսկողության ուղղությունները համապատասխանեցվել են կրթության բնագավառի օրենքներով սահմանված գործընթացներին և դրանց	Ընդունվել է

			լիցենզավորման ենթակա գործունեությունից բխող՝ օրենսդրությամբ նախատեսված հաշվետվությունների հավաստիության նկատմամբ. 1) հանրակրթության (այդ թվում՝ նախադպրոցական կրթության), նախադպրոցական ծառայությունների և արտադպրոցական կրթության նկատմամբ՝ հետևյալ ուղղություններով. ա) նախադպրոցական կրթական ծրագրերի համապատասխանությունը նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշիչների պահանջներին, զարգացնող միջավայրի չափանիշները, ըստ տարիքային խմբերի և զարգացման ոլորտների՝ սաների կրթական և զարգացման վերջնարդյունքներին ու սաներից ակնկալվող կարողունակություններին ներկայացվող պահանջներ. բ) հանրակրթական ուսումնական հաստատությունում իրականացվող կրթական ծրագրերի համապատասխանությունը տարրական, հիմնական և միջնակարգ հանրակրթական ընդհանուր, մասնագիտացված և հատուկ պետական ծրագրերի (հանրակրթական պետական ծրագիր) պահանջներին, ներառյալ՝ ուսումնական պլանի ընդհանրական կառուցվածքին և ուսումնական պլանի կազմման կանոններին, առարկայական չափորոշիչներին ու ծրագրերին, տարեկան ուսումնական ժամանակացույցներին, դասացուցակներին, երաշխավորված դասագրքերի ցանկին՝ անկախ հանրակրթական պետական ծրագիրն իրականացնող կազմակերպության կազմակերպական-իրավական ձևից. գ) հանրակրթական այլընտրանքային, այդ թվում՝ փորձարարական, հեղինակային և միջազգային հիմնական ծրագրերի՝ համապատասխանությունը հանրակրթական, այդ թվում՝ նախադպրոցական կրթական ծրագրերին, պետական չափորշիչների պարտադիր պահանջներին, տվյալ ծրագրի հաստատման կարգին. դ) լիազոր մարմնի կողմից օրենքով սահմանված	ձևակերպումներին, տարանջատվել ընդհանուր, հանրակրթական, նախադպրոցական, արտադպոցական և մասնակիտական կրության բնագավառները վերահսկողության ենթահա ուղղությունները: 2-րդ մասում հանվել են կրկնվող դրույթները, որոնք արդեն ամրագված էին 6-րդ 7-րդ և 8-րդ հոդվածներում:	

			ուղղություններով երաշխավորված արտադպրոցական ծրագրերի պահանջների ապահովում. ե) հանրակրթության յուրաքանչյուր կրթական ծրագրի մակարդակում փոխադրական (այդ թվում՝ էքստեռն), ավարտական, պետական ավարտական քննությունների (ստուգման) անցկացում. զ) պետական հանրակրթական ուսումնական հաստատության դասարանների կազմավորման համապատասխանություն սահմանված չափանիշներին (կարգին). է) նախադպրոցական հաստատությունների սաների ընդունելության, խմբերի կազմավորման, պարապմունքների կազմակերպման, նախադպրոցական ծրագրերին և ծառայություններին ներկայացվող պահանջների և տևողության համապատասխանություն. ը) հանրակրթական ուսումնական հաստատություն ընդգրկված և պարտադիր կրթությունից դուրս մնացած, ինչպես նաև պարտադիր կրթությունից դուրս մնալու ռիսկում գտնվող երեխաներին բացահայտելու և հանրակրթական ուսումնական հաստատություն ընդգրկելու գործողություններ, այդ թվում՝ սահմանված ժամկետից ուշ ընդգրկվող երեխաների կրթություն կազմակերպելու գործընթաց. թ) ուսումնական հաստատության դպրոցական և անհատական բաղադրիչով սահմանված առարկաների ծրագրերի և խմբակների գործունեության՝ լիազոր մարմնի երաշխավորած պայմաններին համապատասխանություն. ժ) հանրակրթական ուսումնական հաստատություններում սովորողների ուսումնառությունը դասարանային (խմբային), անհատական, տնային ուսուցման կամ հեռավար (դիստանցիոն) կրթության միջոցով ապահովելու, ինչպես նաև՝ մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունները ապահովելու գործընթացներ. ժա) հանրակրթական, այդ թվում՝ նախադպրոցական կրթական ծրագրերից բխող ուսումնական նյութերի, դասագրքերի, ուսումնառության նյութերի,		

			ուսումնամեթոդական, ուսումնաօժանդակ ձեռնարկների, ուսումնադիտողական նյութի առկայություն. ժբ) նախադպրոցական ուսումնական հաստատությունների նյութատեխնիկական հագեցվածության պետական նորմատիվների, ներառական և երեխայակենտրոն միջավայրի չափանիշների համապատասխանություն՝ երեխաների տարիքային և զարգացման առանձնահատկություններից բխող նորմատիվներին, ժգ) պետական հանրակրթական, և համայնքային նախադպրոցական ուսումնական հաստատությունների տնօրենների օրենքով և ուսումնական հաստատությունների օրինակելի կանոնադրությամբ վերապահված պարտականությունների կատարման իրավաչափություն, ժդ) հանրակրթական, նախադպրոցական ուսումնական հաստատությունների մանկավարժական աշխատողների թափուր տեղի համալրման (մրցույթի անցկացման, ընտրության կամ նշանակման) գործընթացներ, ժե) հանրակրթական, նախադպրոցական ուսումնական հաստատությունների մանկավարժական և վարչական աշխատողների պաշտոնների՝ սահմանված անվանացանկին, զբաղեցրած պաշտոնի նկարագրերին, իսկ պետական և համայնքային նախադպրոցական հաստատությունների դեպքում՝ նաև օրինակելի հաստիքացուցակին համապատասխանություն. ժզ) արտադպրոցական ծրագրեր իրականացնող կազմակերպությունների և կենտրոնների մանկավարժական աշխատողների՝ պաշտոնների անվանացանկին, դրանց նկարագրերին համապատասխանություն. ժէ) հանրակրթական, նախադպրոցական ուսումնական հաստատություններում կրթական գործընթացի կազմակերպման համար գործածվող փաստաթղթերի համապատասխանություն սահմանված անվանացանկին և ձևերին, ինչպես նաև փաստաթղթաշրջանառության ընթացքում դրանց		

			վարման կանոնների ապահովում, ժզ) օրենսդրությամբ սահմանված այլ ուղղություններ: 3) Մասնագիտական կրթության նկատմամբ՝ հետևյալ ուղղություններով. ա) մասնագիտական ուսումնական հաստատությունում իրականացվող լիցենզավորված որակավորման մոդուլային ծրագրի համապատասխանությունը մասնագիտական կրթության յուրաքանչյուր որակավորման բնութագրիչին, աշխատանքի վրա հիմնված ուսումնառության կազմակերպման պահանջներին, որակավորումը (ուղղվածությունը) ապահովող փաստաթղթերի և ուսումնամեթոդական փաթեթին. բ) հիմնական կրթության հիմքով մասնագիտական կրթական ծրագիր իրականացնելու դեպքում՝ միջնակարգ կրթության երրորդ մակարդակի պետական բաղադրիչով սահմանված առարկաների նվազագույն ցանկի ու ծավալի ապահովման պայմաններ. գ) յուրաքանչյուր ուսումնական տարի լրիվ կամ մասնակի կրթաթոշակի ձևով պետական կամ հանրային մասնագիտական ուսումնական հաստատություն ընդունված սովորողների թվի՝ հատկացված տեղերին (այդ թվում՝ նպատակային ուսուցման) համապատասխանություն, ե) պետության կողմից լրիվ կամ մասնակի կրթաթոշակ տրամադրելու համապատասխանութ-յունը սահմանված չափանիշներին և պայմաններին (դեպքը, հիմքը և չափը), զ) մասնագիտական ուսումնական հաստատութ-յուն ընդունելության, ուսանողի՝ մեկից ավելի մասնագիտական կրթություն ստանալու, մեկ հաստատությունից այլ հաստատություն կամ մեկ որակավորման ծրագրից այլ ծրագիր տեղափոխվելու, ինչպես նաև ուսանողների ուսումնառությունը ընդհատման, ազատման կամ հեռացման միջոցով դադարեցնելու, կամ ուսումնառությունը դադարեցրած անձի ուսանողական իրավունքը վերականգնելու		

			ընթացակարգեր. է) պետական ամփոփիչ ստուգում անցկացնելու, վերահանձնելու, ինչպես նաև սահմանված ժամկետից շուտ կամ ուշ որակավորում շնորհելու ընթացակարգերի հիմքեր. թ) մասնագիտական ուսումնական հաստատությունների մանկավարժական աշխատողի թափուր տեղի համար մրցույթի կարգի պահպանում, մրցույթ չհայտարարելու դեպքեր. ժ) պետական մասնագիտական ուսումնական հատատության տնօրենի մրցութային ընտրության և նշանակման գործընթաց. ժա) պետական մասնագիտական ուսումնական հատատության խորհրդի անդամին առաջադրելու, փոխարինելու, լիազորությունները դադարելու կամ դադարեցնելու հիմքեր: 2. Կրթության բնագավառի տեսչական վերահսկողության միջոցառումներից ստացված կամ ձեռք բերված տվյալների հիման վրա տեսչական մարմինը՝ 1) իրականացնում է լիցենզավորման ենթակա գործունեությունից բխող տարեկան հաշվետվությունների ուսումնասիրություն եւ վերլուծություն. 2) իրականացնում է բացատրական աշխատանքներ կրթության բնագավառը կարգավորող օրենսդրության կիրառման վերաբերյալ, ուսումնական հաստատություններին իրազեկում է իրենց իրավունքների եւ պարտականությունների մասին, իրականացնում է խորհրդատվություն կանխարգելիչ աջակցություն. 3) կազմում է հաշվետվություններ, միջնորդագրեր, հանձնարարականներ, կարգադրագրեր, որոշումներ, ակտեր, եզրակացություններ, տեղեկանքներ, արձանագրություններ, վերլուծություններ եւ օրենքով նախատեսված այլ փաստաթղթեր.		

9.	ՀՀ ԱԺ պատգամավոր Լիլիթ Գալստյան	**ԿԲՏՎ օրենքի նախագծի հոդված 5,**	ժ. կետում «հաշմանդամություն» բառը փոխարինել կամ լրացնել «սահմանափակ կարողություններ ունեցող սովորողների» բառերով:	Ընդունվել է մասնակի Հոդվածն ամբողջությամբ խմբագրվել է և համապատասանեցվել օրենդրության տերմնաբանությանը	Ընդունվել է
10.	ՀՀ ԱԺ պատգամավոր Սիսակ Գաբրիելյան ՀՀ կառավարություն	**ԿԲՏՎ) օրենքի նախագծի հոդված 6,**	Լրացնել 3-րդ մաս, հետևյալ բովանդակությամբ՝ 3. Վերահսկողության շրջանակում անհրաժեշտ, տեսչական մարմնին հասանելի տեղեկատվական համակարգերում առկա թվայնացված տվյալները ձեռք են բերվում բացառապես այդ համակարգերի միջոցով՝ առանց վերահսկվող սուբյեկտին այցելելու կամ վերջինից պահանջելու:	Ընդունվել ղ Հիմնավորում. Կարգավորման դաշտ է բերվել բաց թվային տվյալների օգտագործման հնարավորության հարցը, ինչը հնարավորություն կտա վերահսկողությունը իրականացնել նաև տեղեկատվական հասանելի բազաների կիրառմամբ՝ ավելի արագ և ծախսարդյունավետ միջոցներով:	Ընդունվել է
11.	ՀՀ ԱԺ պատգամավոր Սիսակ Գաբրիելյան ՀՀ կառավարություն	**ԿԲՏՎ) օրենքի նախագծի հոդված 7**	Լրացնել 2-րդ մաս, համապատասխանաբար 2-րդ մասը համարակալել 3-րդ. «2. Ստուգման ընթացքում ստուգաթերթերի հարցերին պատասխանելու համար գործածվում են կրթության կառավարման տեղեկատվական համակարգում առկա թվայնացված տվյալները: » Նոր համարակալմամբ 4-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «4. Վերահսկվող սուբյեկտների գործունեության անհատական ռիսկի բաղադրիչը հաշվարկելիս հիմք են ընդունվում նաեւ սույն օրենքով սահմանված	Ընդունվել է Տես վերևի հիմնավորումը	Ընդունվել է

			տեսչավորման արդյունքները:»		
12.	ՀՀ ԱԺ պատգամավոր Լիլթ Գալստյան	**ԿԲՏՎ) օրենքի նախագծի հոդված 7**	Վերահսկվող սուբյեկտների գործունեության ռիսկայնության աստիճանը որոշելու չափանիշներ սահմանել կամ կարգը սահմանող լիազորող նորմ, կամ տալ հղում գործող կարգին, եթե սահմանված է:	Ընդունվել է մասնակի Հոդվածում կատարվել է լրացում	Ընդունվել է
13.	ՀՀ ԱԺ պատգամավոր Սիսակ Գաբրիելյան ՀՀ կառավարություն	**ԿԲՏՎ) օրենքի նախագծի հոդված 8**	1) Հոդվածը սահմանել տեսչավորման գործընթացի գործողությունների հաջարդականության տրամաբանությամբ. 2) 3-րդ մասը շարագրել հետևյալ խմբագրությամբ՝ «3. Ծրագիրը ներառում է տեսչավորման ենթակա հանրակրթական կամ նախադպրոցական ուսումնական հաստատության լրիվ անվանումը, գտնվելու վայրը, (հասցեն), վերջին տեսչավորման ավարտի ամսաթիվը, մասնագիտական կրթության որոշակի մակարդակում տվյալ որակավորումը հիմնական կրթության հիմքով կազմակերպելու դեպքում՝ տվյալ որակավորման անվանումը:» 2) 5-րդ մասում հանել «ինտերնետային» բառը. 3) 7-րդ մասի 1-ին նախադասությունում «Տեսչավորման իրականացման» բառերը փոխարինել «Տեսչավորում իրականաց-նելու մասին» բառերով, «փոխարինող» բառից հետո լրացնել «պաշտոնատար անձի ստորագրմանը», իսկ 2-րդ նախադասությունում՝ «նշում է կատարում» բառերից հետո շարադրել՝ «տեսչավորում իրականացնելու մասին հրամանում և ստորագրում:». 4) նոր 9-րդ մասում «հաստատության» բառից հետո լրացնել «տեսչավորման ենթական» բառերը. 5) նոր 10-րդ մասում «իրականացմանը» բառը	Ընդունվել է. Հիմնավորում. Առաջարկվող ձևակերպումներով առավել հստակեցվել է գործընթացները, ինչպես նաև շտկվել լեզվական ոճը	Ընդունվել է

			փոխարինե «գործընթացում» բառով. 6) նոր 11-րդ մասի 3-րդ կետի «ծնողների» բառից հետո լրացնել «օրինական ներկայացուցիչների» բառերը, իսկ 4-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «4) սույն մասի 1-3-րդ կետերով կատարված գործողությունների արդյունքների հիման վրա ուսուցչի (դաստիարակի)՝ (տվյալ առարկայի դասավանդման բնութագրի կազմում՝ ըստ ձեւաթղթերի:» 7) նոր 17-րդ մասի 3-րդ կետում «ամսաթիվն ու համարը» բառերը փոխարինել «վավերապայմանները» բառով, իսկ 6-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «6) ուսումնական հաստատության անվանումը, համապատասխան կրթական ծրագրի մակարդակը, այդ թվում՝ մասնագիտական կրթութմակարդակի որակավորումը հիմնական կրթության հիմքով իրականացվելու դեպքում՝ նաև որակավորումը.» բառով. 8) նոր 18-րդ մասում «ինչպես նաեւ» բառերից հետո շարադրել հետևյալ կերպ՝ «ներգրավված մասնագետների իրականացրած գործառույթների ամփոփ նկարագրությունը և սույն հոդվածի 11-րդ մասով նախատեսված գործողությունների վերաբերյալ տեղեկություններ:» 9) նոր 19-րդ մասում լրացնել հետևյալ բովանդակությամբ նախադասություն. «Տեսչավորման եզրակացությանը կցվում են տեսչավորման ընթացքում կիրառված ձևաթղթերը:» 10) նոր 20-րդ մասի 1-ին նախադասությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «Տեսչավորման եզրակացությունը ստորագրվելուց հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում պատշաճ ձեւով (առձեռն, պաշտոնական կամ տեսչավորված ուսումնական հաստատության ղեկավարի կամ նրան փոխարինող պաշտոնատար անձի հայտնած		

			էլեկտրոնային փոստի հասցեով կամ փոստային առաքմամբ) ներկայացվում է տեսչավորված ուսումնական հաստատության ղեկավարին կամ նրան փոխարինող պաշտոնատար անձին:» 11) նոր 21-րդ մասում՝ «տասնօրյա ժամկետում» բառերը փոխարինե «յոթ աշխատանաքյին օրվա ընթացքում» բառերով		
14.	ՀՀ ԱԺ պատգամավոր Լիլիթ Գալստյան	**ԿԲՏՎ) օրենքի նախագծի հոդված 8**	1) 5-րդ կետում օգտագործվում է «տեսչական մարմնի պաշտոնական ինտերնետային կայք», իսկ 22-րդ կետում՝ «Տեսչական մարմնի պաշտոնական կայքէջ» բառակապակցությունները: Նույնականացել: 2) 4-րդ կետում նշվում է «Ծրագրում փոփոխությունները կատարվում են տեսչական մարմնի կառավարման խորհրդի համաձայնությամբ»: Հստակեցնել, լրացնել. ա/ ո՞ր մարմին է լիազորված հաստատելու տեսչավորման տարեկան ծրագիրը, բ/ ինչպե՞ս է ձևավորվում և ինչ լիազորություններով է օժտված տեսչական մարմնի կառավարման խորհուրդը: 3) «Տեսչավորումն իրականացվում է տեսչական մարմնի ղեկավարի հանձնարարագրի (կետ 9) կամ հրամանի (կետ 11) հիմքով»: Նույնականացնել կամ հիմնավորել տարբերությունը: 4) 14 կետի 1) ենթակետում «այլ» բառից հետո լրացնել «սահմանված կամ նախատեսված» բառը:	Ընդունվել է Չի ընդունվել Հարցը կարգավորված է «Տեսչական մարմիններին մասին» օրենքով Հոդվածը խմբագրվել է Ընդունվել է մասնակի, բոլոր փաստաթղթերը նույնականացվել են	Ընդունվել է Չի ընդունվել Ընդունվել է Ընդունվել է

15.	ՀՀ ԱԺ պատգամավոր Սիսակ Գաբրիելյան ՀՀ կառավարություն	**ԿԲՏՎ)** **օրենքի նախագծի հոդված 9,**	1) հոդվածը շարադրել գործողությունների հաջորդականության տրամաբանությամբ , հետևաբար նաև՝ նոր համարակալումով. 2) 1-ին մասի 1-ին նախադասությունը շարադրել տեիևյալ կերպ. «1. Դիտարկումն իրականացվում է տեսչական մարմնի ղեկավարի հրամանի հիման վրա, որում նշվում են տեսչական մարմնի անվանումը, դիտարկում իրականացնող անձի (անձանց) պաշտոնը, անունը, ազգանունը, դիտարկման հիմքերը դիտարկման նպատակը, ժամկետը, ուսումնական հաստատության անվանումը, կրթական ծրագրի մակարդակը, հասցեն (գտնվելու վայրը):» Իսկ 3-րդ նախադասությունում «բազմաթիվ» բառը փոխարինել « երկու կամ ավելի» բառերով. 3) 6-րդ մասի 1-ին նախադասությունը շարադրել հետևյալ կերպ. «6.Դիտարկման հրամանում նշված ժամկետն ավարտվելուց հետո՝ հինգ աշխատանքային օրվա ընթացքում, դիտարկում իրականացնող անձը կազմում է տեղեկանք, որում նշվում են դիտարկում իրականացնող մարմնի անվանումը, դիտարկում իրականացնող անձի պաշտոնը, անունը, ազգանունը, դիտարկվող ուսումնական հաստատության անունը (անվանումը), կրթական ծրագրի մակարդակը, հասցեն (գտնվելու վայրը), խախտումներ հայտնաբերելու դեպքում՝ նաեւ բացահայտված խախտումները, խախտումների նկարագրությունը, խախտման ժամկետը (եթե հնարավոր է որոշել) եւ հղումը նորմատիվ իրավական ակտի այն դրույթին (դրույթներին), որի (որոնց) պահանջները չեն կատարվել կամ խախտվել են:» 4) նոր 7-րդ և 8-րդ մասերը շարադրել հետևյալ կերպ. «7. Դիտարկման արդյունքում տեսչական մարմնի ղեկավարը ուսումնական հաստատության ղեկավարին կամ նրան փոխարինող պաշտոնատար անձին կարող է	Ընդունվել է. Հիմնավորում. Առաջարկվող ձևակերպումներով առավել հստակեցվել է գործընթացները, ինչպես նաև շտկվել լեզվական ոճը	Ընդունվել է

			ներկայացնել առաջարկություններ, տալ հանձնարարականներ կամ կարգադրագրեր՝ բացահայտված խախտումները վերացնելու, օրենդրությանը չհակասող այլ միջոցներ ձեռնարկելու վերաբերյալսահմանելով ժամկետներ: 8. Դիտարկման արդյունքում սահմանված կարգով կազմված տեղեկանքը երկու աշխատանքային օրվա ընթացքում տրամադրվում է Գրասենյակին, ինչպես նաեւ շահագրգիռ պետական կառավարման մարմիններին, մարզպետին կամ տեղական ինքնակառավարման մարմիններին՝ համաձայն սույն օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասի:». 5) նոր 10-րդ և 11-րդ մասերը շարադրել հետևյալ կերպ. «10. Տեսչական մարմինն իր պաշտոնական կայքում եռօրյա ժամկետում պարտադիր տեղադրում է իրականացված դիտարկումների արդյունքների մասին տեղեկատվություն, որը ներառում է դիտարկված ուսումնական հաստատության անվանումը, գտնվելու վայրը, , դիտարկման առարկան, հրապարակման ենթակա դիտարկման արդյունքները: 11. Դիտարկման արդյունքներն օգտագործվում են ուսումնական հաստատության ռիսկը գնահատելիս:»		
16.	ՀՀ ԱԺ պատգամավոր Սիսակ Գաբրիելյան ՀՀ կառավարություն	**ԿԲՏՎ) օրենքի նախագծի հոդված 10, մաս 1**	Շարադրել հետևյալ խմբագրությամբ. 1. Ուսումնական հաստատության կողմից «Լիցենզավորման մասին» օրենքով եւ կրթական ծրագրի համապատասխան մակարդակի իրականացման իրավունքի և որակավորման լիցենզիայի տրման համար սահմանված պայմանները խախտելու դեպքում տեսչական մարմնի ղեկավարը լիցենզիայի գործողությունը դադարեցնելու վերաբերյալ միջնորդագիր է ներկայացնում լիազոր մարմին՝ տեսչական մարմնի կողմից իրականացված վարույթի արդյունքում ընդունված վարչական ակտն անբողոքարկելի դառնալուց հետո՝ հինգ	Ընդունվել է. Հիմնավորում. Առաջարկվող ձևակերպումներով առավել հստակեցվել է գործընթացները, ինչպես նաև շտկվել լեզվական ոճը	Ընդունվել է

			աշխատանքային օրվա ընթացքում: 2) 2-րդ մասը հանել 3) «հնգօրյա ժամեկտում» բառերը փոխարինել «հինգ աշխատանաքային օրվա» բառերով.		
17.	ՀՀ ԱԺ պատգամավոր Սիսակ Գաբրիելյան ՀՀ կառավարություն	**ԿԲՏՎ) օրենքի նախագծի հոդված 11, վերնագիր և մաս 3**	1) Վերնագրում «որոշումների» բառը փոխարինել «փաստաթղթերի» բառով 2) 3-րդ մասում՝ «ներկայացուցիչներին» բառից հետո լրացնել՝ ծանուցվողի ստորագրությամբ: բառերը. 3) 4-րդ մասում «եւ»-ը փոխարինել «կամ»-ով 4) 5-րդ մասում «առձեռն» բառից հետո լրացնել «՝ ծանուցվողի ստորագրությամբ:» բառերը. 5) 6-րդ մասը շարադրեք հետևյալ կերպ. «6. Թղթակցությունը փոստային առաքմամբ ուղարկվելու դեպքում վարչական վարույթին կցվում է հասցեատիրոջն ուղարկվելու մասինծանուցվողի կողմից ստացման վերաբերյալ ապացույցը:» 5) 11-րդ մասում «հաջորդող» բառից հետո հանել «օրվանից հաշված« բառերը	Ընդունվել է. Հիմնավորում. Առաջարկվող ձևակերպումներով առավել հստակեցվել է գործընթացները, ինչպես նաև շտկվել լեզվական ոճը	Ընդունվել է
18.	ՀՀ ԱԺ պատգամավոր Սիսակ Գաբրիելյան ՀՀ կառավարություն	**ԿԲՏՎ) օրենքի նախագծի հոդված 12, մաս 1**	1) 1-ին կետում «վերահսկողություն,» բեռի հետո լրացնել «, իսկ սույն օրենքով սահմանված դեպքում՝ բարձրագույն կրթության ոլորտի տեսչական վերահսկողություն.». 2) 4-րդ կետում հանել «իրերը» բառը, իսկ «յոթ» բառից հետո լրացնել «աշխատանքային» բառը 3) 5-րդ կետը շարադրել հետևյալ կերպ. «5) օրենքով սահմանված դեպքերում հանձնարարականներ և կարգադրագրեր, տալու վերհսկվող սուբյեկտներին՝ վերահսկողության ընթացքում հայտնաբերված խախտումների եւ	Ընդունվել է. Հիմնավորում. Առաջարկվող ձևակերպումներով առավել հստակեցվել է գործընթացները,	Ընդունվել է

			անհամապատասխանությունների վերացման վերաբերյալ, դրանց կատարման համար սահմանելով ժամկետներ.»		
19	ՀՀ ԱԺ պատգամավոր Սիսակ Գաբրիելյան ՀՀ կառավարություն	**ԿԲՏՎ օրենքի նախագծի հոդված 13, մաս 1**	1-ին կետը շարադրել հետևյալ կերպ. «գործել բացառապես օրենքով սահմանված իր լիազորությունների շրջանակում՝ պահպանելով բարեվարքության կանոնները,» 4-րդ կետը շարադրել հետևյալ կերպ. «4) պահպանել անձնական տվյալների պաշտպանության մասին օրենսդրության պահանջները, այդ թվում՝ պահանջել այնպիսի անձնական տվյալներ, որոնք սահմանված են օրենքով և անհարժեշտ են երեխայի լավագույն շահի պաշտպանության համար: » 5-րդ կետում «պահանջները» բառից հետո քարադրել հետևյալ կերպ. «՝ օրենքով սահմանված գաղտնիք պարունակող փաստաթղթերի հետ աշխատելու ընթացքում, այդ թվում՝ ծառայությունը դադարեցնելուց հետո.» 2) 2-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «2. Տեսչական մարմնի ծառայողները պատասխանատվություն են կրում վերահսկվող սուբյեկտից վերահսկողության նպատակով ժամանակավորապես վերցրած փաստաթղթերի եւ այլ անհրաժեշտ նյութերի որակական եւ քանակական ամբողջականությունը պահպանելու և սահմանված ժամկետում դրանք վերադարձնելու համար:»	Ընդունվել է. Հիմնավորում. Առաջարկվող ձևակերպումներով առավել հստակեցվել է գործընթացները,	Ընդունվել է
20.	ՀՀ ԱԺ պատգամավոր Սիսակ Գաբրիելյան ՀՀ կառավարություն	**ԿԲՏՎ օրենքի նախագծի հոդված 14, մաս 1**	4-րդ կետում փաստաբանների բառը փոխարինել «լիազորված ներկայացուցիչների» բեռերով	Ընդունվել է	Ընդունվել է
21.	ՀՀ ԱԺ պատգամավոր Սիսակ Գաբրիելյան	**ԿԲՏՎ օրենքի նախագծի հոդված 15, մաս 1**	Հանել 1-ին կետը	Ընդունվել է	Ընդունվել է

	ՀՀ կառավարություն				
22.	ՀՀ ԱԺ պատգամավոր Սիսակ Գաբրիելյան ՀՀ կառավարություն	**ԿԲՏՎ օրենքի նախագծի հոդված 17,**	1) 3-րդ մասում «երեք» բառը փոխարինել «վեց» բառով 2) Սահմանել անցումային դրույթներ, լրացնել հետևյալ բովանդակությամբ 4-րդ մաս. «4. Սույն օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի՝ 1) 1-ին կետով սահմանված կրթական ծրագրի համապատասխան մակարդակի իրականացման իրավունքի և յուրաքանչյուր որակավորման կամ կրթական ծրագրի աստիճանի լիցենզիայի համար սահմանված պայմանների պահպանման նկատմամբ վերահսկողության դրույթը ուժի մեջ է մտնում «Կրթության մասին» օրենքի 41-րդ հոդվածի դրույթն ուժի մեջ մտնելուց հետո: Մինչ այդ տեսչական մարմինը վերահսկողություն է իրականացնում կրթական ծրագրի համապատասխան մակարդակի իրականացման լիցենզիայի պահանջների հիման վրա: 2) 3-րդ կետի «ա», «բ», «գ», «դ» և «է» ենթակետերով սահմանված նոր կանոնակարգումներն ուժի մեջ են մտնում «Մասնագիտական կրթության և ուսուցման մասին» օրենքից բխող գործողությունների ժամանակացուցին համապատասխան՝ դրանք ընդունվելուց հետո, բայց ոչ ուշ քան 2026 թվականի հունվարի 1-ից: Մինչ այդ տեսչական մարմինը վերահսկողություն է իրականացնում, համապատասխանաբար՝ ա.սույն կետի «ա» և «բ» ենթակետերի մասով՝ մասնագիտական կրթության պետական չափորոշչի համապատասխանության նկատմամբ, բ. սույն կետի «գ», «դ» ենթակետերի մասով՝ կրթաթոշակի, պետության կողմից լրիվ կամ մասնակի (զեղչ) փոխհատուցման և կրթաթոշակի տրամադրման պայմանների պահպանման նկատմամբ:»	Ընդունվել է Հիմնավորում Անծումային նորմի սահմանում անհրաժեշտ է, քանի որ ներկայումս ընդունվել են օրենքներ, որոնց առանձին դրույթներ ուժի մեջ են մտնում մինչև 2026 թվականը: Մինչ այդ կարգավորվող հարաբերությունները կանոնակարգելը հնարավորություն կտա անցումը կատարել օրենքներին համաչափ	Ընդունվել է

23.	Ազգային ժողովի պատգամավոր Լիլիթ Գալստյան	**ԿԲՏՎ օրենքի նախագծի 8-րդ հոդված**	Նախագծի ամբողջ տեքստում «հանձնարարագիր» բառը հանվել է, և թողնվել է միայն «հրաման» բառը:	Ընդունվել է Սույն փոփոխությունը արդեն իսկ կատարվել է 15.01.2025թ. Գիտության, կրթության, մշակույթի, սփյուռքի, երիտասարդության և սպորտի հարցերի մշտական հանձնաժողովից նիստից հետո:	Ընդունվել է
24.	ՀՀ կառավարություն	**«ԿԲՏՎ ՕՆ» 11-րդ հոդվածի 11-րդ մաս**	Նախագծի 11-րդ հոդվածի 11-րդ մասում առաջարկում ենք՝ 1. «http://www.azdarar.am հասցեում» բառերը փոխարինել «Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում» բառերով, 2. «երրորդ» բառը փոխարինել «հինգերորդ» բառով: Առաջարկը պայմանավորված է հիմք ընդունելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 29.1.-րդ հոդվածի 15-րդ մասի կարգավորումը՝ առ այն, որ ծանուցումը տեղադրվում է Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում: Սույն մասով նախատեսված գործողությունները կատարելուց հետո՝ հինգերորդ օրը, համապատասխան ծանուցումները համարվում են հանձնված (ստացված):	Ընդունվել է	Ընդունվել է
25.	ՀՀ ԱԺ պատգամավոր Սիսակ Գաբրիելյան ՀՀ կառավարություն	**«Կրթության մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդված**	Շարադրել հետևյալ խմբագրությամբ. 1) վերնագրում, 1-ին և 2-րդ մասերում « միջնակարգ» բառից հետո շարադրել «, մասնագիտական և բարձրագույն» բառերով, այնուհետև ինչպես տեքստում. 2) 1-ին մասում հանել «պետական» բառը,	Ընդունվել	Ընդունվել է

			3) 2-րդ մասում «ոլորտի» բառը փոխարինել , «բնագավառի» բառով, իսկ «վերահսկողությունը» բառից հետո լրացնել «(ստուգման, տեսչավորման, դիտարկման եւ օրենքով սահմանված այլ ձեւերով)» բառերով,		
26.	ՀՀ կառավարություն	**«Կրթության մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 2-րդ հոդված**	Նախագծի 2-րդ հոդվածում առաջարկում ենք՝ 1.հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ վերնագիր՝ «Եզրափակիչ մաս և անցումային դրույթ», 2. հոդվածի «Սույն» բառից առաջ լրացնել «1.» թիվը և կետադրական նշանը, իսկ «օրը» բառից հետո լրացնել «, բացառությամբ 1-ին հոդվածով լրացվող 3-րդ մասի, որն ուժի մեջ է մտնում 2026 թվականի հունվարի 1-ից» բառերով և կետադրական նշանով: Առաջարկությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ ներկայումս ուսումնական հաստատությունների հաշվետվությունների ուսումնասիրությունը և վերլուծությունը վերապահված է ոլորտի քաղաքականությունը մշակող մարմնին, և տեսչական մարմնին գործառույթի սահուն փոխանցումը ապահովելու համար անհրաժեշտ է անցումային շրջան, հետևաբար Նախագծով սահմանվում է անցումային դրույթ, որ ուսումնական հաստատությունների կողմից հաշվետվությունները տեսչական մարմին ներկայացվելու վերաբերյալ կարգավորումը գործելու է 2026 թվականի հունվարի 1-ից:	Ընդունվել է	Ընդունվել է
27.	ՀՀ կառավարություն	**«Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի վերնագիր**	Հաշվի առնելով, որ նախագծում կատարվել է և՛ լրացում և՛ փոփոխություն, առաջարկում ենք նախագծի վերնագրում «ԼՐԱՑՈՒՄՆԵՐ» բառը փոխարինել «ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ և ԼՐԱՑՈՒՄ» բառերով: Առաջարկվող կարգավորման նպատակը բովանդակության ամբողջականության ապահովելն է:	Ընդունվել է	Ընդունվել է

28.	ՀՀ ԱԺ պատգամավոր Սիսակ Գաբրիելյան ՀՀ կառավարություն	**«Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին և 2-րդ հոդվածներ**	Շարադրել հետևյալ հետեյալ խմբագրությամբ. Հոդված 1. «Բարձրագույն եւ հետբուհական մասնագիտական կրթության մասին» 2004 թվականի դեկտեմբերի 14-ի ՀՕ-62-Ն օրենքի (այսուհետեւ՝ Օրենք) 13.1-րդ հոդվածի. 1) 1-ին մասը՝ հետեյալ խմբագրությամբ. «1. Բարձրագույն ուսումնական հաստատության գործունեության իրականացման ժամանակ լիցենզավորման կարգերով սահմանված լիցենզիայի պարտադիր պայմանների, ինչպես նաև սույն օրենքով նախատեսված դեպքերում, կրթության պետական կառավարման լիազորված մարմինը, սույն օրենքով սահմանված կարգով կամ կրթության բնագավառում վերահսկողություն իրականացնող տեսչական մարմնի միջնորդության հիման վրա կրթության պետական կառավարման լիազորված մարմինը օրենքով սահմանված կարգով բարձրագույն ուսումնական հաստատության նկատմամբ կիրառում է նախազգուշացում կամ դադարեցնում է լիցենզիայի գործունեությունը: 2) 4-րդ մասը ուժը կորցրած ճանաչել. 3) 5-րդ մասի՝ ա) 1-ին կետում «3-րդ և 4-րդ մասերով» բառերը շարադրել «3-րդ մասով». բ) 3-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «3) կրթության բնագավառում վերահսկողություն իրականացնող տեսչական մարմնի նշանակած տուգանքը չվճարելու, իսկ վճարելու դեպքում՝ խախտումը չվերացնելու դեպքում.». Հոդված 2. Օրենքը լրացնել հետեյալ բովանդակությամբ 13.2-րդ հոդվածով. «Հոդված 13.2. Կրթության բնագավառում վերահսկողություն իրականացնող տեսչական մարմինը 1. Բարձրագույն ուսումնական հաստատության գործունեության իրականացման ժամանակ	Ընդունվել է	Ընդունվել է

			լիցենզավորման կարգերով սահմանված լիցենզիայի պարտադիր պայմանների նկատմամբ վերահսկողությունն իրականացնում է կրթության բնագավառում վերահսկողություն իրականացնող տեսչական մարմինը (այսուհետ՝ տեսչական մարմին):		
29.	ՀՀ ԱԺ պատգամավոր Սիսակ Գաբրիելյան ՀՀ կառավարություն	**«Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդված**	Փոփոխվող հոդվածի 1-3-րդ մասերը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «Հոդված 189.29. Բարձրագույն կրթության բնագավառում օրենսդրության պահանջները խախտելը 1. Բարձրագույն կրթության համապատասխան մակարդակներում կրթական ծրագրի իրականացման իրավունքի տրամադրման օրենսդրությամբ սահմանված պայմանները խախտելը, ինչպես նաև բարձրագույն կրթության համապատասխան մակարդակի յուրաքանչյուր աստիճանի ու որակավորման համար լիցենզիայի տրման պայմանները խախտելը՝ առաջացնում է նախազգուշացում: 2. Բարձրագույն կրթության համապատասխան մակարդակներում կրթական ծրագրի իրականացման իրավունքից և յուրաքանչյուր աստիճանի ու որակավորման համար լիցենզիայի պայմաններից բխող՝ օրենքով նախատեսված հաշվետվությունների ներկայացման ժամկետը 10 օրվանից ավելի ժամկետով խախտելը՝ առաջացնում է տուգանք՝ իրավաբանական անձի նկատմամբ նվազագույն աշխատավարձի հազարապատիկի չափով: 3. Բարձրագույն կրթության համապատասխան մակարդակի յուրաքանչյուր աստիճանի ու որակավորման համար տրված լիցենզիայով սահմանված սովորողների սահմանային թիվը գերազանցելը՝ առաջացնում է տուգանք՝ նվազագույն	Ընդունվել է	Ընդունվել է

			աշխատավարձի հազարապատիկի չափով չափով:		
30.	ՀՀ կառավարություն	**«Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 2-րդ հոդված**	Նախագծի 2-րդ հոդվածում առաջարկում ենք՝ 1. հոդվածը նոր լրացվող 244.24-րդ հոդվածի վերնագրում և 1-ին մասում «նկատմամբ» բառը հանել, 2. հոդվածը նոր լրացվող 244.24-րդ հոդվածի 1-ին մասում «189.29-րդ հոդվածով» բառերը փոխարինել «189.29-189.30-րդ հոդվածներով» բառերով: Նախագծում սույն լրացման վերաբերյալ պարզաբանումը ներկայացվել է 7-րդ կետում:	Ընդունվել է	Ընդունվել է
31.	ՀՀ կառավարություն	**«Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 2-րդ և նոր 3-րդ հոդվածներ**	**Լրացնել նոր հոդված հետևյալ բովանդակությամբ.** **Հոդված 2. Հոդված 189.30. Ուսումնական հաստատությունների և կազմակերպությունների կողմից հաշվետվությունները չներկայացնելը** 1. Ուսումնական հաստատությունների և կազմակերպությունների կողմից հաշվետվությունները օրենսդրությամբ սահմանված ժամկետում կրթության բնագավառի վերահսկողություն իրականացնող տեսչական մարմին չներկայացնելը՝ առաջացնում է տուգանք նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկի չափով:»: նոր համարակալումով պայմանավորված 2-րդ հոդվածը համարել 3-րդ, ինչպես նաև 189.29-րդ բառերից հետո լրացնել «և 189.30-րդ» բառերը:	Ընդունվել է	Ընդունվել է
32.	ՀՀ կառավարություն	**«Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 3-րդ հոդված, նոր 4-րդ**	Հոդված 4. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2026 թվականի հունվարի 1-ից: Առաջարկությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ ներկայումս ուսումնական հաստատությունների հաշվետվությունների ուսումնասիրությունը և վերլուծությունը վերապահված է ոլորտի քաղաքականությունը մշակող մարմնին, և տեսչական մարմնին գործառույթի սահուն փոխանցումը ապահովելու համար անհրաժեշտ է անցումային շրջան,	Ընդունվել է	Ընդունվել է

			հետևաբար Նախագծով սահմանվում է անցումային դրույթ, որ ուսումնական հաստատությունների կողմից հաշվետվությունները տեսչական մարմին ներկայացվելու վերաբերյալ կարգավորումը գործելու է 2026 թվականի հունվարի 1-ից:		